տեղի որում գտցիս դու ոչ իցէ զօրագլուխ բարձր աստիճանաւ քան զքեզ, այսմ մտածութեամբ որ հատուցանես զնասն կալանաւորութեան նորա եթէ նա առաջի ատենի դատաստանի գտցի անպարտ, տուաք իշխանութիւն քեզ պահելոյ հաստատուն ամենայն հատոր յօրէնս 'ի վերայ ամենայն զինուորաց քեզ յանձնեցեալ որ ըստ արժանեաց գործոց ձեռաց իւրաքանչիւր գործոց ընդունեսցեն հատուցումն վճռաւ դատաստանաւ ըստ Օրինօք հայաստանեաց, գրուեցաւ և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին։ Ս. Տ. ○ Վ. Տ. ○ Գ. Տ. ○

Մ. Ի. ○

Մ. Գ. ○

Օրինակ նամակի պաշտօն Հարկաց կարգադրութեանց։

ԳԼՈՒԽ ՀԵ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան բարձրահայկայ և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի տան հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօնի հարկաց դիւրութեան պետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն մկրտիչ